

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան»

ՊՈԱԿ

Մասնագիտությունը

«Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում»

Մոդուլի անվանումը՝

«Մազերի ներկում»

Արդյունք 1 Մազերը ներկող , մաշկը պաշտպանող և ներկանյութը մաքրող նյութեր

Թեմա 1.1 Մազերի ներկանյութերի տեսակները և դրանց նշանակությունը

Մազերի ներկման պատմությունն ունի խորը արմատներ: Մեզ հասել են տվյալներ այն մասին, որ հին Ասորեստանում և Պարսկաստանում մազերը և մորուքը ներկում էին միայն հարուստ և ճանաչված մարդիկ: Ավելի ուշ հռոմեացիներն իրենց արևելյան հարևաններից վերցնում են այս սովորու- թյունը:

Այդ ժամանակներում առավել ընդունված էր մազերի գունաթափված երանգները:

Մեզ են հասել հռոմեացի բժիշկ Հալեսի աշխատությունները, որտեղ գետեղված էին մազերի ներկման մի քանի բաղադրատոմսեր: Հետաքրքիր էր, որ ճերմակ մազերի ներկման համար նա առաջարկում էր հունական ընկույզի եփուկ:

Իսկ միջին դարերում մազերի ներկման վերաբերյալ որևէ տեղեկույթ մեզ չի հասել, քանի որ այդ ժամանակաշրջանում իշխել են խիստ բարձր ու կանոններ, որոնք կիրառվել են հատկապես կանանց նկատմամբ:

Վերածննդի շրջանում նորից կյանքի են կոչվում մազերի ներկման հին բաղադրատոմսերը, և կանայք կարողանում են օգտագործել բնական ներ- կեր և խնամքի միջոցներ: Շիկահեր մազերը նորից դառնում են նորաձև:

Ալքիմիայի ծաղկման շրջանում իրենց զարգացումն են ապրում նաև կանանց համար նախատեսված խնամքի այն միջոցները, որոնց բաղադրատոմսերը տեղ են գտել հայտնի ալքիմիկ Ջովաննի Մարինելլիի աշխատություններում:

Ավելի ուշ նորաձև են համարվում շիկակարմիր մազերը: Սակայն միայն թեթևաբար կանայք համարձակություն ունեցան իրենց մազերը ներկել այդ գույնով: Այդ տարիներին լայն կիրառում է ստանում հինան, որի միջոցով հնարավոր էր ստանալ տարբեր երանգներ` սկսած գազարագույնից մինչև պղնձագույնը: Հինային ավելացնում էին բասմա, ընկույզ, երիցուկ և ստանում տարբեր երանգներ: Բարոյական կանայք իրենց մազերը չէին ներկում այդպիսի վառ գույներով, սակայն նորաձևության զարգացման հետ մեկտեղ ամեն ինչ աստիճանաբար փոխվում է:

19-րդ դարը կանանց խնամքի միջոցների արտադրության զարգացման շրջան է համարվում:

1907 թվականին ֆրանսիացի քիմիկոս Էժեն Շուելլերը հայտնագործում է ներկանյութ, որը պարունակում էր պղնձի աղ, ֆոսֆատ և նատրի սուլֆատ:

Շուելլերը հիմնում է «Անվտանգ ներկեր մազերի համար» ֆրանսիական միությունը` ներկեր արտադրելու նպատակով: Մի քանի տարի անց այն դառնում է բոլորին քաջաձանոթ «Լ`Օրեալ» ֆիրման:

Ստեղծված ներկման միջոցների նոր ու լայն տեսականին հնարավորություն էր տալիս կանանց գնելու իրենց նախընտրած գույնը:

Մազերի ներկերը, որոնք պարունակում էին մետաղական աղեր, կիրառվում էին մինչև 20-րդ դարի կեսերը:

Ժամանակակից մազերի ներկ արտադրող ֆիրմաներն առաջարկում են ներկանյութի լայն տեսականի: Դրանց օգտագործման տեխնիկան բավականին

պարզ է՝ ներկանյութը պարզապես քսում են մազերին: Մակայն հարկավոր է ուշադիր լինել երանգը ճիշտ ընտրելու հարցում: Ցանկալի է, որ այն համապատասխանի աչքերի, մաշկի գույներին և ընդգծի տվյալ մարդու ներաշխարհը, անհատական ոճը և այլն:

Մազերի ներկման գործընթացը զարգացել և կատարելագործվել է ժամանակի ընթացքում: Այժմ ներկումը սովորական մասնագիտական գործույթից վերածվել է մի հիանալի միջոցի, որի շնորհիվ կինը դառնում է ավելի գրավիչ ու հետաքրքիր:

Գույն: Մազերի ներկման գործընթացում գերիշխող գույները կոչվում են հիմնական կամ **առաջնային:** Դրանք կարմիր, կապույտ և դեղին գույներն են: Այս գույներն ընկած են բնության մեջ գոյություն ունեցող բոլոր գույների հիմքում: Կարմիրը, դեղինը տաք գույներ են, իսկ կապույտը՝ սառը:

Խառնելով ցանկացած երկու առաջնային գույն՝ ստանում են երկրորդային գույներ: Օրինակ՝ կարմրի ու կապույտի միացումից ստացվում է մանուշակագույն, դեղինի ու կապույտի միացումից՝ կանաչ, դեղինի ու կարմրի միացումից՝ նարնջագույն /պղնձագույն/:

Խառնելով բոլոր երեք հիմնական գույները /նույն համադրությամբ/, կարելի է ստանալ բավական հագեցած մուգ գույն՝ սևին մոտ: Միայն երկու և ոչ ավելի հիմնական գույների խառնուրդից /նույն համադրությամբ/ կարելի է ստանալ բաղադրիչ գույներ՝ մանուշակագույն, կանաչ, նարնջագույն և այլն:

Կարմիր + Կապույտ = Մանուշակագույն

Կապույտ + Դեղին = Կանաչ

Դեղին + Կարմիր = Նարնջագույն

Նույն չափով հակադիր գույների խառնումը հանգեցնում է գունայնության խամրելուն, և արդյունքում ստացվում է ոչ արտահայտիչ գորշ գույն:

Եթե գույները խառնելիս դրանցից որևէ մեկի չափը շատ է լինում, ապա այն խամրեցնում է մյուսի գույնը:

Յուրաքանչյուր առաջնային գույն չեզոքացվում է երկրորդային գույնի կողմից, որն էլ գոյացել էր երկու հիմնական գույների խառնուրդից:

Այսպիսով՝

z կարմիր գույնը չեզոքացվում է կանաչ /կապույտ + դեղին/ գույնի կողմից:

z կապույտը՝ նարնջագույնով /դեղին + կարմիր/:


z դեղինը՝ մանուշակագույնով /կարմիր+կապույտ/:

Խառնելով հիմնական գույները և երկրորդական, բաղադրիչ գույների հետ՝ ստացվում են երրորդ կարգի երանգային գույներ՝ կարմրամանուշակագույն, կապտամանուշակագույն, կապտականաչ, դեղնականաչ և այլն:

Դեղին

Կանաչ

Նարնջագույն



Մանուշակագույն

Ներկայացված շրջանում հիմնական /առաջնային/ գույները գտնվում են խառնած /երկրորդական/ գույների դիմաց:

Իրար հանդիպակաց գույները կոչվում են հակադիր կամ լրացուցիչ:

Վարսավիրական գործում շատ կարևոր է իմանալ յուրաքանչյուր մազի տեսակի պիգմենտը: Ստորև ներկայացվում է պիգմենտների սանդղակը՝

1-4 - հատիկավոր պիգմենտ /կարմրավուն/

5-6 - կիսահատիկավոր պիգմենտ /պղնձագույն/

7-9 - ցրված պիգմենտ /դեղնաոսկեգույն/

10 - անգույն պիգմենտ:

Բնական գույն մազերին հաղորդում է մելանինը: Մելանինի տեսակը, նրա հատիկների չափը և քանակը որոշում են մազերի գունային գամման՝ բաց երանգներից մինչև սևը: Այդ պիգմենտն արտադրող բջիջները կոչվում են մելանոցիդներ: Դրանք տեղաբաշխված են մազի սոխուկում՝ գլխամաշկի արտաքին մասում: Մն մազերը պարունակում են մինչև 20% մելանին: Ժամանակի ընթացքում կամ վնասվածքների հետևանքով մազերի բջիջները զրկվում են իրենց առաջնային գույնից և դառնում են ավելի անկենդան:

Հաճախորդի մազերի գույնը որոշելու համար օգտագործվում է հազեցած գույների բնական սանդղակ: Դրանով են որոշում նաև երանգը, որը կարող է կախված լինել հաճախորդի մազերի բնական պիգմենտից: Գույ ների խորությունը կամ բացությունը ներկայացնում են 1-10 թվանշանների միջոցով՝

1 - Մև

2 - Մուգ շագանակագույն

3 - Միջին շագանակագույն

4 - Բաց շագանակագույն

5 - Մուգ շիկահեր

6 - Միջին շիկահեր

7 - Բաց շիկահեր

8 - Վառ շիկահեր

9 - Սպիտակաշիկահեր

10 - Սպիտակ

Հավելյալ երանգները պայմանավորված են բնական պիգմենտի գերակայությամբ և կարող են լինել մոխրագույն, եթե գերակայում է կապույտ գույնը, ոսկեգույն, եթե գերակայում է դեղին գույնը և կարմիր, եթե գերակայում է կարմիր գույնը, շեկ, եթե գերակայում է դեղնակարմրավուն գույնը: Արհեստական ճանապարհով ստեղծված երանգների թվին են պատկանում շիկակարմիր /դեղնակարմիր/, մանուշակագույն /կարմրակապույտ/ և այլ երանգները:

Հարցեր

Ի՞նչ տվյալներ են մեզ հասել մազերի ներկման մասին:

Ինչպիսի՞ն կարող են լինել մազերի ներկերը:

Թեմա 1.2 Մաշկը պաշտպանող և ներկանյութի հետքերը մաքրող միջոցները և դրանց նշանակությունը

Շատ կարևոր նշանակություն ունի մաշկը պաշտպանող և ներկանյութերի հետքերը մաքրող միջոցների կիրառումը մազերի ներկման ժամանակ: Մազերը ներկելու ժամանակ շատ ուշադիր պետք է լինել, որպեսզի ներկը չվնասի ինչպես մազածածկույթի մոտոկա մաշկը, այնպես էլ

աչքերը, ականջների վերևի և հետևի մասերը, ծոծրակի տարածքը:

Մինչև մազերը ներկելը՝ մաշկի այն հատվածները, որոնք ենթակա են ներկի ազդեցության (մազերի աճի հատվածը, ծոծրակային մասը, ականջների վերևի և հետևի մասերը) հարկավոր է պաշտպանել հատուկ միջոցներով: Քսվում է մաշկը պաշտպանող միջոցը, որը նախատեսված է ինչպես հետագայում հեշտ ներկի հետքերը հեռացնելու համար, այնպես էլ մաշկը չբորբոքվելու, այն չչորանալու, ներկի հետ չշփվելու նպատակով: Մաշկը պաշտպանող միջոցների բաղադրության մեջ հաճախ են օգտագործվում յուղերի տարբեր տեսակներ, որոնք նույնպես հարթ և անվնաս են պահում մաշկը մազերը ներկելու ժամանակ:

Քանի որ մազերի ներկերի բաղադրության մեջ գերակշռող մասը քիմիական նյութեր են, դրանք մաշկի հետ փոխազդելիս, կարող են առաջացնել ռեակցիա, ալերգիա և գրգռվածություն:

Ժամանակակից մաշկը պաշտպանող և ներկանյութերի հետքերը մաքրող շատ տարբեր միջոցներ կան:

Բոլոր առաջատար ներկեր արտադրող միությունները աշխատում են ստեղծել ավելի

անվտանգ և արդյունավետ միջոցներ, որոնք չեն վտանգի մարդկու

առողջությունը: Ադպիսի միություններից են SKALPE, DEOVITA, L' OREAL, WELLA և այլն:

Հարցեր

Ի՞նչ պաշտպանիչ միջոցներ է հարկավոր ձեռնարկել մինչ մազերի ներկումը մաշկը չվնասելու համար:

Ինչպիսի՞ հետևանքներ կարող լինել, եթե չպահպանել մաշկի պահպանման անվտանգությունը:

Թեմա 1.3 Ներկանյութերի, մաշկի պաշտպանման և ներկանյութի հետքերի մաքրող նյութերի կիրառման անվտանգության տեխնիկայի կանոնները

Ներկանյութերի, մաշկի պաշտպանման և ներկանյութերի հետքերի մաքրող նյութերի օգտագործման դեպքում անհրաժեշտ է հետևել ստորև նշված անվտանգության տեխնիկայի կանոններին.

Ներկանյութերի օգտագործման դեպքում հարկավոր է զգույշ քսել ներկանյութը մազերի վրա, որպեսզի այն չվնասի աչքերը: Մինչև ներկը քսելը, պետք է ստուգիչ միջոց ձեռնարկել ներկի նկատմամբ զգայնության որոշելու՝ ակերգիայի համար: Ներկե-

լուց առաջ հարկավոր է ֆիքսել ժամակակը: Ներկված մազերը չի կարելի

ծածկել պոլիէթիլենային գլխարկով: Ժամանակը լռանալուն պես ստուգել ներկված մազերի որակը և կատարել ներկի հեռացում՝ լվացման միջոցով: Իսկ եթե դեռ ժամանակը չի լրացել և զգացվում է գլխի մաշկի վրա անտանելի այրոց, ծածկծկոց՝ ապա անհապաղ անհրաժեշտ է անմիջապես գլուխը լվանալ: Ոչ մի դեպքում չի կարելի մազերի ներկման ժամանակը արագացնելու նպատակով մազերը տաքացնել վարսահարդարիչով կամ կլիմագոնով, եթե նախատեսված չէ ներկի տեխնոլոգիայի օգտագործման մեջ:

Մաշկի պաշտպանման և ներկանյութերի հետքերի մաքրող նյութերի օգտագործման դեպքում հարկավոր է պաշկը պաշտպանելու նպատակով մազերի աճի սահմանում և ականջի վերևի ու հետևի հատվածներում քսել հատուկ միջոցներ, որոնք պարունակում են ճարպեր և յուղեր, ինչն էլ չի թույլ տա ներկին լցվել մաշկի ծակոտիների մեջ: Ներկելու ընթացքում նպատակահարմար է ձեռքի տակ պահել բամբակ թրջված սպիրտով կամ ջրածնի պերօկսիդի լուծույթով կամ էլ ջրով և ընթացքում սրբել ներկված մասերը: Այն թույլ չի տա ներկին ներծծվի մաշկի մեջ և չորանա: Եթե այնուամենայնիվ ներկը չորացել է և ժամանակին չի մաքրվել մաշկի վրայից, ապա կարելի է օգտագործել ներկանյութի հետքերը մաքրող նյութեր: Ներկանյութի հետքերը մաքրող նյութերից օգտվելու դեպքում պետք է արագ աշխատել, քանի որ կարող է ազդել հաճախորդի ինքնազգացողության վրա(ունի շատ տհաճ հոտ):

Հարցեր

Թվարկել մազերի ներկման ներկանյութերից օգտվելու անվտանգության կանոնները:

Թվարկել մաշկի պաշտպանման և ներկանյութերի հետքերի մաքրող նյութերից օգտվելու անվտանգության կանոնները

Արդյունք 2. Մազերի ներկում

Թեմա 2.1 Մազերի ներկանյութերի տեսակները և տարբեր ներկանյութերով աշխատելու տեխնոլոգիան

Մազերի ներկում առաջին խմբի ներկանյութերով

Բոլոր գունաթափող ներկանյութերը հիմնականում փոշիանման են: Լինում են սպիտակ, երկնագույն կամ մանուշակագույն: Ցանկացած գունաթափող ներկանյութ մազերը բացացնում մինչև 9 տոն:

Կիրառվում են՝

- z մազն ամբողջությամբ գունաթափելու համար.
- z շերտաներկման /միլիրովկա/ ժամանակ.
- z դեկապիրովկայի/декопирование/ ժամանակ:

Գունաթափումը մազի գունանյութի քայքայումն է: Մազերը գունաթափել թույլատրվում է այն դեպքում, երբ ցանկալի գույնը ստանալու այլ տարբերակ չկա:

Ցանկացած գունաթափող ներկանյութ մազերը բացացնում է մինչև 9 տոն:

Օգտագործում են գունաթափման փոշի /սպիտակ, երկնագույն կամ բաց մանուշակագույն/, որը լուծվում է նույն ներկի լուծիչով՝ օքսիդով: Խորհուրդ է տրվում նյութը մաշկի փոքր հատվածում փորձարկել և համոզվել, որ այն ալերգիա չի առաջացնում: Փոշին կարող ենք լուծել 3%, 6%, 9% և նույնիսկ 12%-անոց օքսիդիչներով: Շատ կարևոր է օքսիդի %-ի ճիշտ ընտրությունը:

Այդ գործընթացն ընթանում է 3 փուլով՝

- z փխրեցում/разрыхление/. այս փուլում ամոնիակի պերսուլֆատը միանալով ջրածնի պերօքսիդի հետ՝ փխրեցնում է մազերի թեփուկանման շերտը: Այս փուլն սկսվում է նյութի քսելուց 10-ը րոպե անց,
- z գունաբացում /осветление/. այս փուլում ամոնիակի պերսուլֆատի և ջրածնի պերօքսիդի միացությունը ակտիվորեն քայքայում են մազերի ինչպես բնական, այնպես էլ արհեստական պիգմենտները,
- z աննիգիլյացիա/аннигиляция/. այս փուլն սկսվում է նյութի քսելուց 60 րոպե անց, երբ բուֆերային կոմպոնենտները դադարում են գործել և գունաթափման գործընթացը դառնում է անկառավարելի: Ուստի նյութը պահելու ժամանակահատվածը չպետք է գերազանցի 50 րոպեն:

Գունաթափող նյութը քսում են չլվացված չոր մազերին՝ սկսելով ծոծրակային հատվածից: Սկզբնական ներկման ժամանակ անհրաժեշտ է արմատներից թողնել 1,5-2 սմ, իսկ 10-15 րոպե հետո ներկել նաև այդ հատվածները: Կրկնակի ներկման ժամանակ նյութը քսում են արմատներին և ներկման ավարտից 10 րոպե առաջ մազերը սանրում են ողջ երկայնքով: Գունաթափումից հետո մազերն անհրաժեշտ է լվանալ շատ ջրով և փրփրօձառով՝ համոզվելու համար, որ մազերը մաքրված են նյութից:

Ստորև տրվում է աղյուսակ, որտեղ ներկայացվում են մազերի վրա նյութի պահելու ժամկետները՝ կախված օքսիդիչների խտությունից՝

Օքսիդիչ /%/	Պահելու ժամկետը /րոպեներով/	Ներկանյութի և օքսիդիչի հարաբերակցությունը	Պահելու ընդհանուր ժամկետը
1,5	30	1:2	50
3	25	1:2	50
6	20	1:2	50
9	15	1:2	50
12	10	1:2	50

Եթե գունաթափող նյութը անմիջապես շփվում է մաշկի հետ, ապա օգտագործում են առավելագույնը 9% օքսիդիչ մազերի երկարությամբ և 6% միայն՝ արմատներին: Բնական մազերը ամբողջությամբ

գունաթափելու պարագայում օգտագործում են 6% օքսիդիչ և զանգվածը տարածում մազերի ամբողջ երկարությամբ՝ բաց թողնելով արմատից 1 սմ: 10-15 րոպե անց գունաթափում են արմատները, քանի որ գազաթային հատվածում ջերմաստիճանը բարձր է, և գունաթափման գործընթացն արագ է կատարվում:

Գունաթափման ժամանակ գործընթացն արագացնելու նպատակով գլուխը չի թույլատրվում ծածկել կամ լրացուցիչ տաքացնել/սուշուար կամ վարսահարդարիչ/:

Նույն մգության՝ ներկված և բնական մազերը բացացնելիս ստանում են տարբեր գույներ: Ներկված 1-ին և 2-րդ մգության մազերը բացացնելիս ստանում են շատ կարմիր գույն, 3-րդ և 4-րդ մգությունից՝ կարմիր, 5-րդ մգությունից՝ պղնձագույն-կարմիր, 6-ից՝ պղնձագույն, 7-ից՝ ոսկեգույնի և պղնձագույնի խառնուրդը, 8-ից և 9-ից՝ ոսկեգույն, 10-ից՝ շատ բաց ոսկեգույն:

Բնական մազերը բացացնելիս կարևորվում է բնական գունանյութի երանգը: **Հաճախ անհրաժեշտություն է լինում մազը ոչ թե գունաթափել, այլ ուղղակի թեթևակի հանել մազի գունանյութը. այս գործընթացն անվանում են «գունանյութի լվացում»/смыть/:** Տվյալ դեպքում օգտագործում են այլ բաղադրությամբ զանգված. լուծում են 30գ փոշի և 30գ ջուր, 30գ օքսիդ և 30գ փրփրօճառ:

Եթե մազերը բաց գույնի են կամ ցանկալի արդյունքը քիչ է տարբերվում ստացվածից, ապա լվացման համար օգտագործում ենք 6% օքսիդիչ, իսկ ավելի ուժեղ ազդեցության համար՝ 9%:

Շերտաներկում: Առաջին կարգի ներկանյութը լուծվում է 3%, 6% կամ 9%-անոց օքսիդիչներով՝ 1 : 1,5 հարաբերությամբ, այսինքն՝ 20 գ փոշի և 30 գ լուծիչ:

Քանի որ շերտաներկման ժամանակ նյութը չի շփվում մաշկի հետ, կախված

ված մազի որակից և վիճակից՝ օգտագործում են նույնիսկ 12% օքսիդիչ՝ 1:1 հարաբերությամբ: Փոշին լուծվում է 1 բաժին 1,5 բաժին լուծիչով, այսինքն՝

20 գ փոշի և 30 գ լուծիչ:

Շերտաներկման ժամանակ օգտագործում են թե՛ ներկ, թե՛ գունաթափող նյութ:

Դեկապիրովկա: Սա ենթադրում է արհեստական պիգմենտի հեռացում: Եթե ներկումից հետո հաճախորդին չի գոհացնում ստացված գույնը, ապա կիրառվում է դեկապիրովկա, այն է՝ հեռացնել քիմիական ներկումից առաջացած անցանկալի գույնը: Մազերի դեկապիրովկայի համար կիրառում են երեք տեսակի բաղադրություններ՝

1. չհամատեղվող երանգների հեռացման համար խառնում են ներկանյութ, 6%-անոց օքսիդիչ, ջուր և փրփրօճառ՝ հավասար չափաբաժիններով,
2. չհամատեղվող երանգների հեռացման և մեկ գունեղանգ բացացնելու համար խառնում են 20 գ ներկանյութ, 30 գ 6%-անոց օքսիդիչ, 30 մլ ջուր և 7 մլ փրփրօճառ /խորը մաքրման/,
3. չհամատեղվող երանգների հեռացման և երկու գունեղանգ բացացնելու համար խառնում են նույն բաղադրիչները, ինչ որ նշված է 2-րդ

կետում, սակայն մի տարբերությամբ. այստեղ օգտագործվում է 9%-անոց օբսիդիչ:

Դեկապիտոկլայի խառնուրդը քսում են ներկված մազերին վրձնով՝ սկսելով ամենածանրաբեռնված գոտիներից: Ընթացքում անընդմեջ, սահող շարժումներով «դուրս բերել» ներկանյութը մազերից՝ սկսելով մազափնջերի արմատներից մինչև ծայրերը:

Մազերի ներկում երկրորդ խմբի ներկանյութերով

Վարսավիրական գործում ավելի լայն կիրառում ունեն այս խմբի ներկանյութերը: Դրանք 100%-ով ներկում են ճերմակ մազերը և գունային առումով բազմազան են: Ի տարբերություն առաջին խմբի ներկանյութերի, դրանք կարող են մազերը բացանել 3-4 գունաերանգով: Այդ խմբի ներկանյութերն ունակ են մազերը գունաթափել 4 երանգով և միաժամանակ ներկել դրանք ցանկալի գույնով, սա հեշտացնում է վարսահարդարի աշխատանքը՝ կրճատելով հաճախորդին սպասարկելու ժամանակահատվածը: Ի տարբերություն երրորդ խմբի ներկանյութերի՝ դրանք երկար ժամանակ պահպանում են գույնը և կարող են ներկել մազերն ավելի բաց գունաերանգներով, քան բնականն է:

Ուստի վարսահարդարը պետք է լավ իմանա դրանցով աշխատելու կանոնները: Որպեսզի ստանա ցանկալի գույնը, նա պետք է վերցնի նախատեսածից մեկ գունաերանգ բաց:

Որպես կանոն, ներկանյութի գույնը տրվում է թվերով /թվանշաններով/: Յուրաքանչյուր ֆիրմայի ներկ ունի իր ներկային սանդղակը, որտեղ զետեղված է, թե ո՞ր երանգը, ո՞ր թվով է նշվում:

Դիտարկենք «Լոնդակոլոր» ներկի օրինակով /ներկը վերցված է պատահականության սկզբունքով/:

Վերջին արտադրության «Լոնդակոլոր» ներկերը ունեն 42 երանգ և 6 միքստոն:

Միքստոնը ներկանյութ է, որը մասամբ ծածկում է անցանկալի երանգները և ուժեղացնում է ցանկալի երանգը:

Ներկայացնենք միքստոնի համարները և դրանց ազդեցությունները՝

Միքստոն	Մասամբ ծածկում է	Ուժեղացնում է
02 - մոխրագույն	-----	մոխրագույնները
03 - ոսկեգույն	մանուշակագույն	մարգատագույն
034 - պղնձագույն	կապույտ	ոսկեգույն
04 - կարմիր	կանաչ	պղնձագույն
05 - մանուշակագույն	դեղին	կարմիր
09 - կապույտ	նարնջագույն	մանուշակագույն

Շնորհիվ սրա, վերոնշյալ ներկի գունային հնարավորություններն ավելի ընդարձակվում են:


Միքստոնի կիրառումը հնարավորություն է տալիս ոչ միայն ուժեղացնել կամ փոխել գույնի որոշակի ուղղվածությունը, այլև ստանալ ցնցող ավանգարդային գույներ՝ բաց մազերի վրա:

Ներկանյութում տրված են հետևյալ թվանշանները՝ 421: Օրինակ՝ «Լոնդակոլոր» ներկանյութի համարի 1-ին թիվը ցույց է տալիս գունաերանգի խորությունը/բացության աստիճանը/, 2-րդ թիվը՝ հիմնական երանգը, իսկ 3-րդը, եթե այն կա, ուրեմն հավելյալ երանգ է:

Գույնի/ գունաերանգի/ խորության սանդղակն սկսվում է 2 թվանշանից, որը նշանակում է սև գույն, 3-ը՝ մուգ շագանակագույն, 4-ը՝ շագանակագույն, 5-ը՝ բաց շագանակագույն, 6-ը՝ մուգ բլունդ, 7-ը՝ միջին բլունդ, 8-ը՝ բաց բլունդ, 9-ը՝ վառ բլունդ, 10-ը՝ շիկահեր:

Ընդունված է նաև երանգների հետևյալ սանդղակը՝

0 - բնական երանգ /հենքային երանգ/. 1 - մոխրագույն, 3 - ոսկեգույն, 4 - պղնձագույն, 5 - կարմիր, 6 - մանուշակագույն, 7 - շագանակագույն, 8 - մարգատագույն:




Լոնդակսիտի խտությունը կախված է ներկի տեսակից՝

6%-անոցը օգտագործվում է նորմալ ներկման ժամանակ.

9%-անոցը՝ մազերը երկու գունաերանգով բացացման ժամանակ.

12%-անոցը՝ մազերը երեք-չորս գունաերանգով բացացման ժամանակ: «Լոնդակոլոր» ներկում գոյություն ունի հատուկ ներկանյութերի խումբ, որը մազերը բացացնում է 4 գունաերանգով և ներկում դրանք: Այդ խումբը նշվում է թիվ 12-ով /ներկանյութերի 12-րդ շարք/: Այս համարում 1 թիվը ցույց է տալիս երանգը:

Օրինակ՝ 12/1



Ներկանյութը հատուկ լուծվում է լոնդաքսիդով՝ 1:2 հարաբերությամբ /9%
և 12 % խտությամբ/: Ներկանյութերի պահման ժամկետը՝ 40-50 րոպե է:

Մազերի ներկում երրորդ խմբի ներկանյութերով

Այս խմբի ներկանյութերը կիրառվում են 50% ապիտակած մազերի դեպ-քում: Դրանք հրաշալի ներկում են մազերը՝ հաղորդելով դրանց ադամանդե գույն, ունեն նորաձև գույներ /երանգը երանգի կամ ավելի մուգ/ և պահ- պանվում են երկար ժամանակ:

Այս խմբին են պատկանում երանգավորիչ փրփրոճառները, փրփուրները: Երանգավորիչները կիրառվում են երկու փուլով: Սկզբում այն հանդես է գալիս որպես լվացման հիգիենիկ մի Type equation here ջոց. 10-15 գ փրփրոճառը տարածում են գլխամաշկի վրա ձեռնոցների օգնությամբ՝ թողնելով, որ այն ներծծվի և լվանում: Սրբիչով չորացված մազերի վրա տարածում են 20-30 գ փրփրո- ճառը՝ պահելով 15-30 րոպե՝ կախված ցանկալի արդյունքից՝ ավելացնելով քիչ քանակությամբ ջուր՝ փրփրացնում են և լվանում:

Երանգավորիչ փրփուրներ: Սրանք լինում են երկու տեսակի՝ ներկող և երանգավորող փրփուրներ՝ հարդարման համար: Ներկող փրփուրները պահպանվում են մի քանի շաբաթվա ընթացքում, իսկ երանգավորող փր- փուրները՝ լվացումից լվացում: Ներկող փրփուրները ձեռքերի օգնությամբ քսում են և տարածում են սանրի միջոցով՝ պահելով 15-30 րոպե և լվանում են մաքուր ջրով՝ առանց փրփրոճառի:

Հարդարման համար նախատեսված փրփուրները քսվում են մաքուր մազերին՝ տարածելով ձեռքերով կամ խոզանակով և հարդարում առանց լվանալու:

Մազերի ներկում չորրորդ խմբի ներկանյութերով

Սրանք չեն պարունակում ամոնիակ և ջրածնի պերօքսիդ, չեն վնասում մազերը՝ շնորհիվ ներկերի մեջ առկա այն ամինաթթուների, որոնք մտնում են նաև մարդու մազի կառուցվածքի մեջ: Դրանք են հինան և բասման: Հինան և բասման մշակման ժամանակ հավելումներ չեն ստանում: Չորացվում են և մանրացվում մինչև փոշի դառնալը: Ներկի գործընթացը տևում է 2-3 ժամ: Բասման առանց հինա չեն օգտագործում, որովհետև այն ունի կապտականաչավուն երանգ, իսկ հինայի հետ խառնելով՝ ստանում են բնականին ավելի մոտ երանգ: Իսկ միայն հինայով կարող են ստանալ վառկարմիրից մինչև մուգ շագանակագույն: Որքան մազի գույնը բաց է, այն- քան այն հեշտ ու արագ է ներկվում: Հինան ցանկալի է գնել օգտագործու- մից անմիջապես առաջ, որովհետև այն շուտ է հնանում և փչանում: Այն չի կարելի պահել խոնավ տեղում, քանի որ կորցնում է իր ուժը: Քսում են մաքուր և չոր մազերին:

Պատրաստման համար հարկավոր է ունենալ փայտյա կամ ապակյա տարա և խառնելու հարմարանք: Հինան այնտեղ լցնելուց հետո աստիճա- նաբար ավելացնում են 80°C ջուր և թողնում են սառչի մինչև 40°-50°C: Կա- րելի է ներկել նաև հերթականությամբ՝ սկզբից հինայով, ապա՝ բասմայով: Ցանկացած դեպքում անհրաժեշտ է պոլիէթիլենային գլխարկով ծածկել մազերը, քանի որ գործընթացը երկար է տևում և ընթացքում ջուրը կարող է գոլորշիանալ:

Հարցեր

Մազերի ներկանյութերի ինչ տեսակներ կան:

Ներկայացնել տարբեր ներկանյութերով աշխատելու տեխնոլոգիաները:

Թեմա 2.2 Մազերի ներկման տեսակները

Ժամանակակից վարսավիրական գործում կիրառվում են մազերի ներկման մի քանի տեսակներ:

Ժամանակավոր ներկում: Սա թույլ է տալիս հասնել միատարր ներկման՝ մազերին հաղորդելով երանգ և փայլ: Սակայն այդպիսի ներկը պահպանվում է մինչև հաջորդ մազերի լվացումը: Դա պայմանավորված է նրանով, որ ներկանյութը չի հասնում մազերի ներքին շերտեր, այլ միայն մազի արտաքին շերտը պատում է բարակ թաղանթով:

Ժամանակավոր ներկման միջոցներից են՝ պլիսը/*плис*/, գունավոր փրփուրը, գույն-բրաշինգը /*брашинг колор*/:

Ոչ կայուն ներկում: Սա հնարավորություն է տալիս հասնելու ավելի կայուն որակի: Ներկանյութը մազերի վրա պահպանվում է երկար ժամա- նակ՝ 3-4 լվացում: Այս մեթոդը հնարավորություն է տալիս սպիտակած մազերը թեթևակի ներկել և ստանալ բազմազան երանգներ: Ոչ կայուն ներկման միջոցները կիրառվում են առանց օքսիդիչների: Այսպիսի ներկման նպատակն է՝ ընդգծել մազերի բնական գույնը՝ առանց փոխելու հիմնական գույնը, ներկել սպիտակած մազերը՝ վերացնելով դրանց դեղին երանգը: Այս տեսակի ներկանյութերի մոլեկուլներն իրենց մոլեկուլյար զանգվածի թեթևության շնորհիվ թափանցում են մազերի կեղևային շերտ՝ հաղորդելով մազին ցանկալի գույն՝ առանց քիմիական էլեմենտների միջամտության:

Ոչ կայուն ներկում իրականացվում է նաև երանգավորիչ փրփոռառով /*քսուքանման էմուլսիա*/, որի նույնիսկ փոքր չափաբաժինը հնարավորու- թյուն է տալիս պիգմենտներին ներթափանցելու մազերի կառուցվածքի մեջ: Էմուլսիան պարունակում է քիչ քանակությամբ ամոնիակ և ջրածնի պերօքսիդ, ինչերն էլ նպաստում են մազերի վրա ներկի պահպանմանը:

Երանգավորիչ ներկանյութերը սպիտակած մազերին հաղորդում են բնա- կան գույն և երկար են պահպանվում: Փոքր քանակի օքսիդների օգտագոր- ծումը չի փոխում գույնի երանգը, այսինքն՝ այն ավելի բաց չի դառնում:

Պարզ կայուն ներկում: Սա նոր մեթոդ է՝ մշակված ժամանակակից պա- հանջմունքներին համապատասխան: Այս մեթոդն ապահովում է ներկի ֆիքսացիայի լավագույն որակ և մազերը պահպանում արտաքին ազդե- ցություններից՝ արևից, քամուց և այլն:

Այս տեսակի ներկերը չեն պարունակում ամոնիակ, ջրածնի պերօքսիդ, որոնք, ինչպես գիտենք, քայքայում են մազի կառուցվածքը: Այս ներկերի միջոցով կարելի է ստանալ վառ բնական գույներ, մազերին հաղորդել առավել մուգ գույներ կամ գունաթափված մազերին վերադարձնել իրենց բնական գույնը:

Առանց ամոնիակ ներկերն ավելի անվնաս են և քավում են մաքուր, խո- նավ մազերին՝ ներկի ներթափանցումը հեշտացնելու համար: Այս ներկերը հնարավորություն են տալիս մազի գունային տոնը բացել առավելագույնը

1 աստիճանով, իսկ մզացնել հնարավոր է ցանկացած աստիճան: Առանց ամոնիակ ներկերի հետ օգտագործվում է 1,9% կամ 4% օքսիդիչ և լուծվում է 1 բաժին ներկին 2 բաժին լուծիչով: Քանի որ առանց ամոնիակի ներկերը քիչ վնասակար են, ուստի խորհուրդ է տրվում դրանցով ներկել գունաթափված կամ քիմիական գանգրացման ենթարկած մազերը: Առանց ամոնիակ ներկերով ներկելիս խառնել ներկային սանդղակից ցանկացած 2 ներկ՝ հաշվի չառնելով ո՛չ մգությունը, ո՛չ երանգը: Այս տեսակի ներկից հետո ցանկալի է լվանալ առանց փրփրօճառի և օգտագործել բալզամ:

Կայուն ներկումն իրականացվում է անիլին պարունակող ներկանյութերով, որոնք հնարավորություն են տալիս ստանալու գունային հարուստ գամմա: Դրանք ապահովում են սպիտակած մազերի ամբողջական ներկում և մազերի վրա երկար ժամանակ պահպանվում են: Սկզբում եղջերային շերտին ընկնում է ամոնիակը, հետո ներկանյութերի մոլեկուլների ջուրը թափանցում է մազի ներքին շերտ, որտեղ էլ տեղի է ունենում ջրածնի պերօքսիդի և ներկանյութերի մոլեկուլների փոխազդեցությունը, որն էլ մազերին հաղորդում է նոր գույն, ինչպես նաև մեծացնում է մոլեկուլյար զանգվածը՝ ապահովելով գույնի պահպանման ավելի երկար ժամկետ:

Մազերի ներկում բնական նյութերով: Մազերը ներկում են նաև բնական նյութերով՝ առանց քիմիական խառնուրդներ օգտագործելու:

Հարցեր

Մազերի ներկման ի՞նչ տեսակներ գոյություն ունեն:

Ինչո՞վ է տարբերվում գունաբացումը գունաթափումից:

Ինչո՞վ է տարբերվում մազերի ներկումը և մազերի երանգավորումը:

Թեմա 2.3 Ներկանյութի ընտրություն և նախապատրաստում

Ներկանյութը մազերին քսելու կանոնները

1. Քսուքանման ներկանյութերը քսում են վրձնի օգնությամբ, կարճ մազերի դեպքում՝ ուղղահայաց բաժուկներով, և հորիզոնական բաժուկներով, եթե մազերը երկար են:
2. Հեղուկ ներկանյութը քսում են սպունգով կամ ապլիկատորով՝ հորիզոնական բաժուկներով:
3. Բոլոր ներկանյութերը սկսում են քսել ծոծրակային հատվածից: Վերջում մշակվում է մազերի աճման եզրագիծը, որտեղ մազերն ավելի ընկալունակ են ներկի նկատմամբ, որովհետև ծակոտկեն են: Պա-րանոցի վրա աճող մազերը նույնպես խորհուրդ է տրվում վերջում ներկապատել: Հատկապես այն վերաբերում է մուգ գույնի և կարմրավուն երանգ ունեցող մազերին: Այլապես կարող է ստացվել ոչ բնական ուրվագիծ:

4. Սպիտակած մազերի մասնակի ներկման դեպքում ներկը սկսում են քսել այն հատվածներում, որտեղ ավելի շատ են սպիտակ մազափնջերը: Մազերի ընդհանուր զանգվածը ներկելուց հետո կրկին վերա- դառնում են նույն հատվածներին:
5. Նախնական ներկման ժամանակ ներկանյութը քսում են սկզբում արմատներից 2-3 սմ բարձր, իսկ 10 ր անց՝ արմատներին: Դա հատ- կապես կարևոր է բաց գույների ներկման ժամանակ:
6. Կրկնակի ներկման ժամանակ ներկանյութը սկզբում քսում են ար- մատներին, իսկ 10 ր հետո՝ նոր մազերի ամբողջ երկարությամբ:
7. Քիմիական ներկանյութեր օգտագործելու ժամանակ տաքացնող գլխարկ չեն օգտագործում:
8. Ներկման ժամանակ անհրաժեշտ է օգտագործել ոչ մետաղյա գործիքներ և սարքեր, գործողություններն անպայման կատարել ձեռնոցներով:
9. Ներկերը խառնելուց հետո պետք է անմիջապես այն օգտագործել:
10. Ներկի քսումը պետք է տևի 10 րոպեից ոչ ավելի:

Ներկման արագությունը կախված է մազերի ներծծման հատկությունից, սպիտակության աստիճանից և դրա կառուցվածքից: Ներկման ժամանակը կարող է կախված լինել սենյակի ջերմաստիճանից, հաճախորդի վիճա- կից: Մազերի ծայրերը ավելի արագ են ներկվում, քան արմատները, դրա համար էլ մազերի ծայրերը ներկելու համար ավելի քիչ ժամանակ է պա- հանջվում:

Մազերի ներկման փուլերը

1. Մազի ներկի ընտրությունը:
2. Թեստավորում:
3. Մազերի լվացում՝ անհրաժեշտության դեպքում /տվորաբար ներկը քսում են չլվացած մազերին/:
4. Մազերին ներկի քսում:
5. Մազերի վրա ներկը պահելու ժամանակի ֆիքսում:
6. Մազերի լվացում ներկից:
7. Ներկած մազերի խնամք:



Եթե հաճախորդը ալերգիկ է, ապա անհրաժեշտ է անցկացնել թեստավորում. ներկանյութի փո- քր մասը քսել սկանջի հետևի չոր մաշկին: Եթե 24 ժամվա ընթաց- քում մաշկը կարմրում է, ապա անհրաժեշտ է ներկը փոխել:



Մազերը ներկելուց առաջ չեն լվանում: Նպա- տակն է պահպանել ճարպային շերտը, որն էլ իր հերթին պաշտպանում է մազերն ու գլխա- մաշկը: Լաքի, մուսի մացորդները չափավոր կեղտոտ մազերից կարելի է հանել մազերը սանրելով փափուկ խոզանակ- սանրով:

պետք է կատարել՝ չհասնելով գլխամաշկին, և ընդամենը մեկ անգամ:

Իսկ եթե,
այնուամենայնիվ,
անհրաժեշտություն կա
լվանալու, ապա այն



Մազերը բաժանել գլխի գագաթով անցնող երկու ուղղահայաց բաժուկների և ստանալ չորս հատված:

Նախքան մազերը ներկելը անհրաժեշտ է մազերի աճման եզրագծի մաշկը քսուքապատել, որպեսզի ներկից պահպանվի և չգրգռվի: Ներկն անհրաժեշտ է բացել օգտագործելուց անմիջապես առաջ:

Սկզբում ներկը քսվում է բաժուկներով, հետո՝ ծոծրակային հատվածում, քանի որ այն համարվում է սառը հատված /ներկման գործընթացն այստեղ ավելի դանդաղ է տեղի ունենում/:

Մազերը ճակատի և քունքի հատվածները ներկապատվում են վերջում, քանի որ այդտեղ աճում են ամ

ենաբարակ մազերը և, բնականաբար, ներկվում են շատ արագ:

Մազերը ներկելիս առաջին հերթին ներկանյութը հարկավոր է քսել սպիտակ մազերին:

Հատկապես մազերի կրկնակի ներկման ժամանակ անհրաժեշտ է խնամքով աշխատել: Սկզբում ներկում են մազերի արմատները, իսկ արդեն ներկված մազերի վրա քսում են ներկի ավելի բարակ շերտ:

Առավել զգույշ է պետք վարվել քիմիական ճանապարհով գանգրացված մազերի ներկման ժամանակ: Նման մազերը կարելի է ներկել մեկ շաբաթ գանգրացումից հետո: Քանի որ գանգրացված մազերը արագ են ներկվում, ուստի ներկը պահելու ժամանակահատվածը հարկավոր է կրճատել 5-10 րոպեով:

Երբ մոտենում է ներկման ժամանակի ավարտը, անհրաժեշտ է ստուգել ներկման որակը՝ սանրի հաստ կողմով մազերը ներկից ազատելով: Եթե մազերը լավ չեն ներկվել, ապա ավելացվում է ներկման ժամանակը: Այդպես են վարվում



Հավելյալ ջերմությունը կրճատում է ներկման ժամանակը:

նաև սպիտակ մազերի ներկման ժամանակ: Հասնելով ներկման ցանկալի որակին՝ պետք է քիչ քանակությամբ ջրով կատարել էմուլյացիա: Դրա համար մազերի ներկը փրփրացնելով՝ կատարում են մերսող շարժումներ՝ մազերի ամբողջ երկարությամբ: Էմուլյացիան օգնում է առանց դժվարության լվանալ ներկը գլխամաշկից և հաղորդում է մազերին փայլ:

Ներկման գործողությունները ավարտելուց հետո անհրաժեշտ է հաճախորդին տալ որոշակի ցուցումներ՝ ներկած մազերի խնամքի հետ կապված: Այլապես ներկած մազերը կարող են խամրել, և ներկը կարող է պարզապես հաջորդ լվանալու ընթացքում թափվել:

Ներկած մազերի համար պետք է օգտագործել հատուկ փրփրօճառ և
բալզամ: Կարելի է հաճախորդին առաջարկել օգտագործել
երանգավորիչ փրփրօճառ կամ նույն հատկությանը օժտված բալզամ՝
մազերին հավելյալ պիգմենտների քանակ հաղորդելու նպատակով:

Ներկած մազերի խնամքը

Ցանկացած քիմիական ներգործում ազդում է մարդու մազերի որակի վրա: Մազերը ներկելուց հետո անհրաժեշտ է սնուցել և խոնավացնել: Հատուկ փրփրոճառները, բալզամները, դիմակները պարունակում են հավելյալ նյութեր, որոնք հարթեցնում են մազի թեփուկները, ինչի շնորհիվ էլ պիգմենտի մասնիկները երկար են պահպանվում: Ճիշտ ընտրված երանգավորիչ փրփրոճառը, հարդարիչ մուսը կամ բալզամը պարունակում են պիգմենտային ներկանյութ, որը թարմացնում է ներկած մազերը:

Մինչ ներկը մազերից լվնալը անհրաժեշտ է ներկը գլխի վրա փրփրացնել՝ ավելացնելով փոքր քանակի ջուր:



ՄԱԶԵՐԻ ԴԱՍԱԿԱՆ ՆԵՐԿՈՒՄ



Ներկման ժամանակակից մեթոդները

Ժամանակակից ներկման մեթոդները հնարավորություն են տալիս ստանալու բազմազան գունային էֆեկտներ: Լայն տարածում ունեն և նորաձև են հետևյալ շերտաներկումները՝ «միլիրովկան», «կոլորիրովկան», «բալայաժը»:

«Բալայաժը» միայն մազերի ծայրամասերի գունաթափումն է կամ գունափոխումը:

Շերտաներկումը՝ միլիրովկան, առանձին մազափնջերի գունաթափում է: Այժմ շերտաներկումը կատարվում է տարբեր մեթոդներով՝ հատուկ գլխարկի, փայլաթիթեղի, լայնատամ սանրի միջոցով՝ կախված ընտրած երանգավորման ձևից և աստիճանից:

- Շերտաներկման տեսակները
 Մազերի միլիրովկան ունի բազմազան տարբերակներ՝
 z շերտաներկում՝ գլխարկով.
 z դասական շերտաներկում.
 z կրկնակի շերտաներկում՝ փայլաթիթեղի միջոցով.
 z վերնի մազափնջերի շերտաներկում.
 z ճակատի մազափնջի շերտաներկում.
 z մազափնջերի ծայրերի միլիրովկա և այլն:



Մինչև գլխարկի մթոցով շերտաներկում՝ հրականաց-նելը մազերը հարկավոր է լավ սանրել՝ աճման ուղղու-թյամբ:




Հագնել գլխարկը գլխարկի վրայից հեռու - նով հանել մազափնջերը

Շերտաներկման համար նախատեսված մազափնջերը կարող են լինել տարբեր հաստության՝ կախված ընտրված սանրվածքից:

Որպեսզի գունաթափոց փող նյութը չհոսի գլխարկի անցքերից, այն պետք է լինի բավականին խիտ: Միլիրովկայի գործընթացը արագացնելու համար կարելի է հաճախորդի գլուխը ծածկել փայլաթիթեղով կամ օգտվել «կլիմազոն» սարքից:



Ներկը լվանալ, մազերին քսել համապատասխան բալզամ և գլխարկի հանուկ սկսել ծոծրակային



Դուրս հանած մազերը լավ սանրել, և ներկը քսել՝ սկսած ծոծրակային հատվածի

Միլիրովկա՝ փայլաթիթեղով

Փայլաթիթեղը պատրաստվում է նախօրոք: Այն 2 անգամ ավելի պետք է լինի մազերի երկարությունից:

Յուրաքանչյուր փայլաթիթեղի զույգը ծավում է նաև կողքերից՝ 0,5-1 սմ խորությամբ:

Ջուլակի լայնությունը պետք է լինի այնպիսի չափի, որ հնարավոր լինի այն երկու անգամ ծալել կենտրոնից և կողքերից:

Եթե միլիրովկան կատարվում է ամբողջ գլխի մակերեսով, ապա ներ- կանյութը սկսում են քսել ծոծրակային հատվածից:

Մազերը փայլաթիթեղից հանում են և լվանում մազափունջը մազափնջի հետևից:



Մազերը բաժանել հատվածների:



Մազափնջերն առանձնացնել:



Փայլաթիթեղը դրվում է ներկվող մազափնջի տակ:



Ներկը քսել մազափնջերին:



Փայլաթիթեղը ծալել դեպի ներս:



Ընդհանուր տեսքը ներկանյութը քսել ուց հետո:



Մազափուռն չըռնել առ մեկ հանվում է փայլաթիթեղից և լվացվում է հենց փայլաթիթեղի վրա:



Նույն ձևով կատարվում է աճած արմատների վրա՝ թողնելով սակայն ներկանյութը քսվում է միայն արմատների:

Ալիքանման սանրվածքի շերտաներկում

Խոնավ մազերը հարդարել ալիքանման

սանրվածքի տեսքով:

Կաշուն ժապավենով ֆիքսել ալիքները երկու կողմից: Մազերը չորացնել այնպես, որ ալիքները չխախտվեն: Հավասարաչափ քսել ներկանյութը ալիքների ուռուցիկ հատվածներին և մազերի ծայրերին: Ներկանյութը պահել որոշված ժամանակահատվածում: Այնուհետև ժապավենը հանել և մազերը լվանալ: Չեզոքացնել:



Ներկանյութը քսել մազերին:



Նախապես գլխի վերևի մասի մազերը հավաքել:

Շերտաներկում՝ փայլաթիթեղյա սկավառակի օգնությամբ

Փայլաթիթեղյա սկավառակով շերտաներկում կատարելու տեխնոլոգիան հայտնագործել են դարեր առաջ:

Ներկայացնենք դրա կատարման քայլաշարը՝

1. Գլխի վերևի հատվածի մազերը հավաքել և ֆիքսել:
2. Փայլաթիթեղով սկավառակը հագցնել գլխին:
3. Մազափնջերի լայնությունը և չափերը կարող են լինել տարբեր:
4. Մազափնջերին քսել ներկանյութը:
5. Հասնելով ընտրված գույնին՝ մազերը լվանալ և չորացնել:



Միլի իրոովկայից հետո լվանալ մազերը

Ճակատային մազափնջի շերտաներկում



Ճակատային մազափնջի շերտաներկումը կա-

տարվում է դասական ձևով:

Մազերի վերևի շերտերի շերտաներկում

Ներկանյութը քսվում է մազերի վերևի շերտին:



«Պոչիկներ» և «արմավենիներ» շերտաներկում



Գլխի մակերեսը բաժանել 3x3 սմ կամ 4x4 սմ քառակուսիների: Քառակուսիների մագափնջե-րը պոչիկներով կապել: Դրանք փաթաթել փայլաթիթեղով՝ թողնելով ծայրերը ազատ 2-3 սմ: Ներկանյութը քսել պոչիկներին 1 սմ, 2 սմ, 3 սմ /ըստ ցանկության/: Հաջորդ քայլերը դասականի ձևով:

Եռանկյունաձև փայլաթիթեղով շերտաներկում

Այս շերտաերանգավորումը կատարվում է դասական ձևով, միայն փայլաթիթեղի ծալման ձևն է թելադրում մագափնջի տեսքը:



Շերտաներկում՝ «արևի շողիկներ»

Մազերը գգել, եթե կարիք կա՝ լաքապատել, որ ուղիղ կանգնեն, և մազերի ծայրերին քսել ներկանյութը:



**Կոլորիբովկա
Շերտաներկում՝ տախտակի օգնությամբ**

Այս տեխնիկան օգտագործվում է տղամարդկանց և կանանց կարճ սանրվածքների ժամանակ:

Կոլորիբովկան՝ տարբեր գույներով բարակ մազափնջերի ներկում է:

Գոյություն ունի այսպիսի ներկման մի քանի տեխնոլոգիա՝

z «Մարմար»

z «Շողեր»

z «Դավմանտին» և այլն:

«Մարմար» տեխնոլոգիան ենթադրում է առանձին մազափնջերի երանգավորում գունաթափող նյութի միջոցով և հաջորդական երանգավորումով: Օրինակ՝ կարմրաշագանակագույն երանգը թարմացնում է շիկահեր մազերը՝ դարձնելով մազերի գույնն առավել հագեցած, իսկ շերտաներկումը հաղորդում է դրանց որոշակի ծավալ:

«Շողեր» տեխնոլոգիան հնարավորություն է տալիս ստանալու գունախաղ, որը դարձնում է մազերն առավել ծավալուն և արտահայտիչ:

«Դավմանտին» տեխնոլոգիան հարմար է կիրառել ալիքավոր մազերի համար: Մազերն ամբողջ գլխի մակերեսով բաժանվում են հորիզոնական բաժուկների, որոնք իրարից գտնվում են 3 սմ հեռավորության վրա: Շողերն ստեղծվում են մազերի ամբողջ երկարությամբ՝ սկսած ծոծրակային հատվածից, շախմատային կարգով՝ սկսած մեջտեղից և օգտագործում են գունաբացող նյութ: Փայլաթիթեղի կիրառմամբ այդպես մշակում են ամբողջ գլուխը: Նյութը պահելու ժամանակը կախված է նրանից, թե ինչ չափով ենք ցանկանում երանգը բացել: Որքան ժամանակը երկար են պահում, այնքան վառ են ստացվում շողերը: Այնուհետև բոլոր մազերը երանգավորում են:

Հարցեր

Ի՞նչ հիմնական գույների կիրառմամբ է իրականացվում մազերի ներկումը: -----

Ժամանակակից վարսավիրական գործում մազերի ներկման ի՞նչ եղանակներ են կիրառվում:-----

Նշե՛ք ներկանյութը մազերին քսելու կանոնները:-----

Որո՞նք են մազերի ներկման փուլերը:-----

Նկարագրեք շերտաներկման, կոլորիբովկայի, բալայաժի գործընթացը:-----

Ի՞նչ է իրենից ներկայացնում շերտաներկումը:-----

Ինչպե՞ս է կատարվում «միլիրովկա փայլաթիթեղով»:-----

Ինչպե՞ս է կատարվում ալիքանման սանրվածքի շերտաներկումը:-----

Նկարագրե՛ք շերտաներկումը փայլաթիթեղյա սկավառակի օգնությամբ:-----

Ի՞նչ է իրենից ներկայացնում կոլորիրովկան:-----

Թեմա 2.4 Մազերի ամբողջական ներկում

Վերցրե՛ք որևէ ֆիրմայի արտադրության ներկանյութ: Ուսումնասիրե՛ք բաղադրությունը, ներկայացրեք՝ ո՞ր խմբին է պատկանում, ե՞րբ և ի՞նչ նպատակով այն կօգտագործեք:

Գործնական աշխատանք

Կատարել գործողություններն ըստ ցուցումների՝
/ներկանյութը մազերին քսելու կանոնները/

1. Քսուքանման ներկանյութերը քսում են վրձնի օգնությամբ, կարճ մազերի դեպքում՝ ուղղահայաց բաժուկներով և հորիզոնական բաժուկ- ներով, եթե մազերը երկար են:
2. Հեղուկ ներկանյութը քսում են սպունգով կամ ապլիկատորով՝ հորիզոնական բաժուկներով:
3. Բոլոր ներկանյութերը սկսում են քսել ծոծրակային հատվածից: Վերջում մշակվում է մազերի աճման եզրագիծը, որտեղ մազերն ավելի ընկալունակ են ներկի նկատմամբ, որովհետև ծակոտկեն են: Պա- բանցի վրա աճող մազերը նույնպես խորհուրդ է տրվում վերջում ներկապատել: Հատկապես այն վերաբերում է մուգ գույնի և կարմ- բավուն երանգ ունեցող մազերին: Այլապես կարող է ստացվել ոչ բնական ուրվագիծ:
4. Սպիտակած մազերի մասնակի ներկման դեպքում ներկը սկսում են քսել այն հատվածներում, որտեղ ավելի շատ են սպիտակ մազափն- ջերը: Մազերի ընդհանուր զանգվածը ներկելուց հետո կրկին վերա- դառնում են նույն հատվածներին:
5. Նախնական ներկման ժամանակ ներկանյութը քսում են սկզբում արմատներից 2-3 սմ բարձր, իսկ 10 ր անց՝ արմատներին: Դա հատ- կապես կարևոր է բաց գույների ներկման ժամանակ:
6. Կրկնակի ներկման ժամանակ ներկանյութը սկզբում քսում են արմատներին, իսկ 10 ր հետո՝ մազերի ամբողջ երկարությամբ:
7. Քիմիական ներկանյութերն²³ օգտագործելու ժամանակ տաքացնող գլխարկ չեն օգտագործում:
8. Ներկման ժամանակ անհրաժեշտ է օգտագործել ոչ մետաղյա գոր- ծիքներ և սարքեր, գործողություններն անպայման կատարել ձեռնոց- ներով:
9. Ներկերը խառնելուց հետո պետք է անմիջապես այն օգտագործել:
10. Ներկի քսումը պետք է տևի 10 րոպեից ոչ ավելի:

Գործնական աշխատանք

Համարակալել ըստ կատարման հաջորդականության
/մազերի ներկման փուլերը/

Մազերի նախնական լվացում /անհրաժեշտության դեպքում/:

Մազի ներկի ընտրություն:

Մազերի վրա ներկի ժամանակահատվածի ֆիքսում:

Մազերի լվացում ներկից:

Մազերին ներկի քսում:

Ներկած մազերի խնամք:

Թեստավորում:

Թեմա 2.5 Մազերի երանգավորում

Թեմա 2.6 Մազերի շերտավոր ներկում:

Գործնական աշխատանք

Օգտվելով գծագրերից՝ կեղծամի վրա ցույց տալ «փայլաթիթեղով միլիրովկան»:

